

**Ինչո՞ւ է սահմանվել հատուկ տնտեսական նորմատիվ
Կենտրոնական բանկի մեկնաբանությունը**

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն



Ինչո՞ւ է սահմանվել հատուկ տնտեսական նորմատիվ. Կենտրոնական բանկի մեկնաբանությունը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամերի պատմությունը ցույց է տվել, որ այդ իրավիճակներում զգալիորեն աճում է ֆինանսական շուկաների տատանողականությունը, իսկ շուկայի մասնակիցների սպասումները և ռիսկի նկատմամբ նրանց «ախորժակը» կարող են անկանխատեսելի զարգացումներ ստանալ, ինչն էլ իր հերթին կարող է բերել համակարգային լուրջ ռիսկերի, երբ որպես արդյունք՝ խոցվում են ոչ թե մեկ-երկու ֆինանսական ինստիտուտի գործընթացները, այլ խաթարվում է ամբողջ ֆինանսական համակարգը:

Այս տեսանկյունից Հայաստանի ֆինանսական համակարգը բացառություն չէ, և ֆինանսական շուկայում տեղ գտած զարգացումները դրա վառ ապացույցն են: Շուկայի տատանողականության նման աճը և անհիմն սպասումների ձևավորումը, Կենտրոնական բանկի գնահատականների համաձայն, լուրջ հիմնախնդիրներ կարող են ստեղծել ապագայում ՀՀ ընդհանուր ֆինանսական կայունության պահպանման տեսանկյունից:

Հենց նմանատիպ համակարգային ռիսկերի գսպման համար ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը 2009թ. հոկտեմբերի 14-ին ընդունել է թիվ 297 Ն որոշումը, համաձայն որի՝ սահմանվել է արտարժույթի տնօրինման տնտեսական նորմատիվ, որը նպատակաուղղված է սահմանափակել արտարժույթային շուկայում մասնակիցների «ախորժակը» և նպաստել ֆինանսական կայունության ամրապնդմանը:

Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ վերոնշյալ նորմատիվն օրենքի պահանջով պետք է ուժի մեջ մտնի վեցամսյա ժամկետում, իսկ ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող քաղաքականությունը մշտապես ունեցել է կանխարգելիչ բնույթ, ապա ԿԲ խորհուրդը 2009թ. հոկտեմբերի 20-ի թիվ 300Ն որոշմամբ սահմանեց ժամակավոր բնույթի արտարժույթային ռիսկը սահմանափակող տնտեսական նորմատիվ՝ նպատակ հետապնդելով գերծ պահել ֆինանսական ամբողջ շուկան համակարգային ռիսկերի դրսևորումներից և չեզոքացնել հնարավոր անբարենպաստ ապագա զարգացումները բանկերի, հաճախորդների և ընդհանրապես ամբողջ հասարակության համար: